2019, ՀՈՒՆԻՍ Բ, ԹԻՎ 12 (536)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

13 հունիսի **Վիրահայոց թեմի ուխտավորներին**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վիրահայոց թեմի ուխտավորներին՝ ուղեկցությամբ Թբիլիսիի Ս. Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցու հոգեւոր հովիվ Հուսիկ քհն. Հարությունյանի:

Տեր Հուսիկը Նորին Սրբությանը տեղեկացրեց, որ վիրահայերի ուխտագնացության նպատակը Մայր Աթոռի սրբությանն ու զորությանը հաղորդակցվելն է ու Ամենայն Հայոց Կաթողիկոսից հայրական օրհնություն ստանալը:

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը փոխանցեց ուխտավորներին՝ ողջունելով Վիրահայոց թեմի հավատավոր հայորդիներին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին առաջնորդելու նախաձեռնությունը: Նորին Սրբությունը կարեւորեց հայրենիքից հեռու բնակվող հայորդիների այցելությունները Հայաստան եւ հաղորդ դառնալը պատմական սրբավայրերին, ժողովրդի ապրելակերպին, հոգսերին ու ձեռքբերումներին, որպեսզի լիցքավորված եւ զորացած վերադառնան իրենց օջախները՝ ավելի նախանձախնդրությամբ լծվելու ազգային եւ հայրենական կյանքի շինությանը:

Գարեգին Երկրորդ Հայրապետը ասաց, որ քանիցս հովվապետական այցով եղել է Վրաստանում եւ ականատեսը դարձել վիրահայերի զորավոր հավատքին, որի շնորհիվ նրանք կարողացել են պահպանել եւ աշխույժ պահել իրենց ազգային, հոգեւոր եւ մշակութային կյանքը: Հայոց Հովվապետը հորդորեց ուխտավորներին՝ չընկրկել ծառացած դժվարությունների առջեւ, այլ՝ զորացած նախնիների հավատքով շարունակել արարել եւ ստեղծագործել՝ ի պայծառություն հայոց կյանքի եւ Վիրահայոց թեմի:

Հանդիպմանը Նորին Սրբությունը նաեւ իր գնահատանքը հայտնեց Վիրահայոց թեմի հոգեւոր դասին՝ իրենց առաքելությունը նախանձախնդրությամբ եւ նվիրումով իրականացնելու եւ ազգային արժեքները պահպանելու համար:

Վերջում Նորին Վեհափառությունը հայորդիներին մաղթեց, որ Աստված նորոգի նրանց ուխտը՝ մշտապես պահելով Իր սիրո եւ խաղաղության մեջ:

14 հունիսի **Արմավիրի թեմի կիրակնօրյա դպրոցների սաներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց Արմավիրի թեմի կիրակնօրյա դպրոցների շուրջ 240 սաների հետ՝ առաջնորդ Սիոն արք. Ադամյանի ուղեկցությամբ:

Հայցելով Նորին Սրբության հայրական օրհնությունը՝ Սիոն սրբազանը նշեց, որ Արմավիրի թեմի տարբեր շրջաններում գործող կիրակնօրյա վարժարանների սաները Մայր Աթոռ են այցելել իրենց սերը, հարգանքն ու հավատարմությունը հայտնելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Հայոց Հայրապետի հանդեպ:

Այնուհետեւ իր ուրախությունը հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ մանուկներին, պատանիներին եւ ուսուցիչներին բերելով իր հայրական սերն ու օրհնությունը:

Նորին Սրբությունը կարեւորեց թեմերում գործող կիրակնօրյա դպրոցների առաքելությունը, որի շնորհիվ հայորդիները հնարավորություն են ստանում ուսանելու մեր Տեր Հիսուս Քրիստոսի կենսաբեր պատգամները, հաղորդ դառնալու Հայոց Եկեղեցու պատմությանը եւ նրա սրբություններին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը սաներին հորդորեց Աստծո սիրո մեջ հասակ առնել, լավ սովորել եւ ազգի արժանի զավակներ դառնալ՝ Աստծո պատվիրաններին հավատարիմ կազմակերպելով իրենց կյանքի ընթացքը: *«Եկեղեցու հովանու ներքո լինել նշանակում է լինել միաժամանակ աստվածասեր եւ հայրենասեր անձ: Այս երկու հասկացությունները՝ աստվածսիրությունը եւ հայրենասիրությունը, սերտորեն շաղկապված են իրար: Դրանք մեր պատմության նվիրագործված հասկացություններն են՝ մեկ ամբողջություն դարձած: ...Ազգասիրությունը նշանակում է սիրել ազգի կերտած մշակույթը, ազգի անցած ուղին, մղած պայքարները, նրա արժեքային ողջ համակարգը, իսկ մեր պարագային այդ ամբողջը շաղախված է քրիստոնեական հավատքով, աստվածսիրության զգացումով»*,– ասաց Վեհափառ Հայրապետը՝ նշելով, թե ինչպես կարող է որեւէ մեկը ազգը սիրել եւ չսիրել Աստծո սիրով եւ երախտագիտությամբ կերտված արժեքները, հայրենի երկիրը զարդարող վանքերն ու եկեղեցիները, մեր պատմությունը, հերոսական ոգին մեր ժողովրդի, որ մշտապես մարտեր է մղել իր հավատքի պաշտպանության եւ հայրենյաց սիրո համար: Նորին Սրբությունն իր գնահատանքն արտահայտեց թեմական առաջնորդին եւ թեմի հոգեւոր սպասավորներին՝ կիրակնօրյա դպրոցների գործունեությունն ուշադրության կենտրոնում պահելու եւ սաների հանդեպ հոգածություն դրսեւորելու համար:

Վերջում Գարեգին Երկրորդ Հայրապետը նվերներ ընծայեց փոքրիկ ուխտավորներին:

16 հունիսի **ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի ուխտավորներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Գարեգին Ա» կրթական կենտրոնում հանդիպում ունեցավ ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի Մինեսոտա նահանգի 36 ուխտավորների հետ, որոնք երկշաբաթյա այցով հայրենիք էին ժամանել Ս. Սահակ եկեղեցու հոգեւոր հովվի՝ Թադեոս քահանա Բարսեղյանի առաջնորդությամբ:

Ողջույնի իր խոսքում Թադեոս քահանան տեղեկացրեց, որ ուխտավորների մեծ մասն առաջին անգամ է Հայաստանում՝ ուրախություն հայտնելով, որ այցը սկսվում է Հայոց Հայրապետի օրհնությամբ: Տեր հայրը Նորին Սրբությանը ներկայացրեց համայնքային կյանքի ձեռքբերումները՝ հավելելով, որ համայնքը տարեցտարի ավելի է մեծանում, ավելանում է նաեւ հայկական ամենօրյա եւ կիրակնօրյա դպրոցների սաների թիվը:

Հայրական իր օրհնությունը բերելով ամերիկաբնակ հայորդիներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարեւորեց ուխտագնացությունների կազմակերպումը դեպի հայրենիք, որոնք նորոգում են հայորդիների ազգային, հոգեւոր ապրումները՝ նրանց հաղորդ դարձնելով սեփական ինքնությանը, հայ ժողովրդի հերոսական անցյալին: Նորին Սրբությունը նշեց, թե քրիստոնեական հավատքի եւ հայրենասիրության շնորհիվ է, որ սփյուռքում ապրող յուրաքանչյուր հայ շարունակում է ազգային-հոգեւոր արժեքներով կրթել եւ դաստիարակել մատաղ սերնդին՝ ակտիվ պահելով հայ համայնքը:

Հայոց Հայրապետն անդրադարձ կատարեց նաեւ Ս. Էջմիածնի խորհրդին՝ նշելով, որ Էջմիածինը բոլոր հայերի սրտում եւ աղոթքներում է, եւ պատմության ամենադժվար պահերին քրիստոնեական հավատքն ու հույսն են օգնել աշխարհասփյուռ հայությանը՝ դիմագրավելու ազգի ու Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերներին: Նորին Սրբությունը մասնավորապես խոսեց հայրենիքի եւ սփյուռքի կյանքում առկա դժվարությունների ու խնդիրների եւ դրանց հաղթահարման ուղիների մասին:

Հանդիպումից հետո ուխտավորները մասնակցեցին Պատարագին:

Շարունակությունը՝ էջ 2

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Սկիզբը՝ էջ 1

17 հունիսի

Ավստրալիայից ժամանած ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմից ժամանած ուխտավորներին՝ ուղեկցությամբ

Մելբուռնի Ս. Աստվածածին եկեղեցու հոգեւոր հովիվ Խաչեր քահանա Հարությունյանի:

Տեր Խաչերը Նորին Սրբությանը տեղեկացրեց, որ մինչեւ Հայաստան ժամանելը ավստրալահայերն ուխտավորաբար այցելել են Երուսաղեմ եւ այժմ՝ մինչեւ վերադառնալը, ցանկանում են նաեւ հաղորդակցվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սրբությանն ու զորությանը եւ ստանալ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական օրհնությունը: Այցից իրենց տպավորությունները ներկայացրին նաեւ ուխտավորները:

Վեհափառ Հայրապետը, իր օրհնությունը փոխանցելով հայորդիներին, անդրադարձ կատարեց տարեսկզբին Ավստրալիա կատարած իր հովվապետական այցին՝ փաստելով հայ համայնքի հայաշունչ եւ եկեղեցասեր կյանքի մասին: Նորին Սրբությունը գոհունակությամբ ընդգծեց Մելբուռնի հայ համայնքի համախմբվածությունն իրենց հոգեւոր հովվի շուրջ՝ նշելով, որ հոգեւորականի այդչափ սիրված լինելն է երաշխիքը համայնքի պայծառության եւ հայկական ինքնության պահպանության:

Զրույցի ընթացքում Կաթողիկոսը կարեւորեց երիտասարդների ներգրավվածությունը համայնքային կյանքում եւ դրան միտված բազմապիսի ծրագրերի իրականացումը:

Վեհափառը վստահությամբ արձանագրեց, որ այս ճամփորդությունն առավել պետք է զորացնի հայորդիներին իրենց հավատքի մեջ:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուխտավորներին մաղթեց, որ Աստված նորոգի նրանց ուխտը՝ մշտապես պահելով Իր սիրո եւ խնամքի ներքո:

Միաբանական համագումարի մասնակիցներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Գարեգին Ա» կրթական կենտրոնում հանդիպում ունեցավ հունիսի 18-22-ը Մայր Աթոռում անցկացվելիք միաբանական համագումարի առիթով ժամանած միաբանների (ծայրագույն վարդապետ, վարդապետ եւ աբեղա) հետ: Համագումարին մասնակցում են նաեւ ներկայացուցիչներ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից եւ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունից:

Նորին Սրբությանը եւ ներկա միաբաններին ողջունեց ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի Լաս Վեգաս քաղաքի Ս. Կիրակոս եկեղեցու հոգեւոր հովիվ Սասուն ծ. վրդ. Զմրուխտյանը: Իր խոսքում հայր սուրբը գոհունակությամբ ընդգծեց, որ յուրաքանչյուր միաբանի համար ուրախություն է վերադառնալ Մայր Աթոռ՝ ծնրադիր իր աղոթքը բարձրացնելու առ Աստված եւ ստանալու Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական օրհնությունը:

Այնուհետեւ համագումարի մասնակիցներին ողջունեց եւ իր օրհնությունը բաշխեց Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հայոց Հովվապետը գոհունակությամբ նշեց, որ Արարատյան տոների շրջանում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների համախմբումը Մայր Աթոռում գեղեցիկ ավանդույթ է դարձել: Նորին Սրբությունը կարեւորեց միաբանական համագումարի պարբերական կազմակերպումը՝ միաբանական ուխտի վերանորոգման, հոգեւոր կյանքի զորացման եւ միջանձնային շփումների շնորհիվ եղբայրասիրական ոգու ամրապնդման համար եւ խորհրդածելու ազգային կյանքը հուզող խնդիրների ու եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերների շուրջ, նաեւ միմյանց հետ կիսվելու հովվական փորձառությամբ:

Իր գնահատանքը բերելով եկեղեցականներին՝ Հայոց Հովվապետը հաստատեց, որ միաբանների նվիրյալ ծառայության շնորհիվ այսօր զորանում է եկեղեցու առաքելությունը ժողովրդի կյանքում: Նորին Սրբությունը մաղթեց, որ առաջիկա շաբաթը լինի արդյունավետ աշխատանքի եւ համատեղ աղոթական կյանքի հոգենորոգ շրջան:

Վեհափառ Հայրապետն ու միաբանները անդրադարձան հոգեւոր առաքելության իրականացման ճանապարհին առկա խնդիրներին, ազգային եւ հայրենական կյանքը հուզող հարցերին:

18 հունիսի

ՀՀ-ում Գերմանիայի դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Մաթիաս Քիսլերին, ով ավարտում է իր դիվանագիտական առաքելությունը Հայաստանում:

Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց դեսպանին՝ Հայաստանում իրականացրած առաքելության համար եւ բարձր գնահատեց ծառայության ընթացքում նրա՝ Հայաստանի եւ Հայոց Եկեղեցու հանդեպ դրսեւորած վերաբերմունքը եւ ոգին: Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ դեսպանատան եւ Մայր Աթոռի միջեւ հարաբերությունները մշտապես եղել են ջերմ եւ բարեկամական:

Իր խոսքում Հայոց Հայրապետն անդրադարձավ հայ-գերմանական հարաբերությունների զորացման գործում ներդրվող ջանքերին, ինչպես նաեւ Գերմանիայի հայոց թեմին:

Իր հերթին դեսպանը նշեց, որ տպավորված է Հայաստանով եւ նրա հարուստ մշակույթով: Պրն. Քիսլերը իր շնորհակալությունը հայտնեց Նորին Սրբությանը գործակցության համար՝ գոհունակությամբ հավելելով, որ պաշտոնավարման ընթացքում Գերմանիայից ժամանած բազում պատվիրակություններ է առաջնորդել Մայր Աթոռ: Գերմանիայի դեսպանը կարեւոր նկատեց

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներդրումը միջեկեղեցական կապերի զորացման գործում:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը դեսպանին մաղթեց նորանոր հաջողություններ իր հետագա գործունեության մեջ:

21 հունիսի

Իրաքի Քուրդիստանի ինքնավար մարզի նախկին փոխվարչապետին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իրաքի Քուրդիստանի ինքնավար մարզի նախկին փոխվարչապետ եւ ֆինանսների նախարար Սարգիս Աղաջանին՝ ուղեկցությամբ Իրաքի Հայոց թեմի առաջնորդ Ավագ արք. Ասատուրյանի:

Նորին Սրբությունն իր երախտագիտությունը հայտնեց հյուրին՝ դժվարին տարիներին Իրաքում տարբեր ազգությունների քրիստոնյաներին, այդ թվում՝ նաեւ հայերին ցույց տրված աջակցության եւ անվտանգ ապաստան տրամադրելու համար:

Հայոց Հայրապետն իր մասնավոր գնահատանքը բերեց տիար Աղաջանին՝ Դհոք քաղաքում հայկական Ս. Ն. Շնորհալի եկեղեցու եւ հայկական Հավրեզք բնակավայրի կառուցումը հովանավորելու, ինչպես նաեւ Էրբիլ քաղաքի հայկական նորակառույց Ս. Խաչ եկեղեցու տարածքը բարեկարգելու համար:

Իր հերթին պրն. Սարգիս Աղաջանը, շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը ջերմ ընդունելության համար, հավաստիացրեց, որ շարունակելու է իր օգտակարությունն ու աջակցությունը բերել Իրաքի քրիստոնեական համայնքի հայաշունչ եւ եկեղեցասեր կյանքի մասին: Նորին Սրբությունը գոհունակությամբ ընդգծեց Մելբուռնի հայ համայնքի համախմբումը Մայր Աթոռում գեղեցիկ ավանդույթ դարձնելու համար:

Հայոց Հայրապետն անդրադարձավ հայ-գերմանական հարաբերությունների զորացման գործում ներդրվող ջանքերին, ինչպես նաեւ Գերմանիայի հայոց թեմին:

Իր հերթին դեսպանը նշեց, որ տպավորված է Հայաստանով եւ նրա հարուստ մշակույթով: Պրն. Քիսլերը իր շնորհակալությունը հայտնեց Նորին Սրբությանը գործակցության համար՝ գոհունակությամբ հավելելով, որ պաշտոնավարման ընթացքում Գերմանիայից ժամանած բազում պատվիրակություններ է առաջնորդել Մայր Աթոռ: Գերմանիայի դեսպանը կարեւոր նկատեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներդրումը միջեկեղեցական կապերի զորացման գործում:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը դեսպանին մաղթեց նորանոր հաջողություններ իր հետագա գործունեության մեջ:

24 հունիսի

ՀՀ ԶՈՒ 5-րդ բանակային կորպուսի զորամիավորումների եւ Արմավիրի կայազորի սպաներին՝ իրենց ընտանիքներով

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, «Քրիստոնյա ընտանիք՝ պաշտպանված հայրենիք» խորագրով հոգեւոր, ազգային-մշակութային միջոցառումների շրջանակներում, ընդունեց ՀՀ ԶՈՒ 5-րդ բանակային կորպուսի զորամիավորումների եւ Արմավիրի կայազորի սպաներին՝ իրենց ընտանիքներով:

Սա Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ 2019 թվականն ընտանիքի տարի հռչակելու առիթով ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության կազմակերպած առաջին ուխտագնացությունն էր դեպի Ս. Էջմիածին: Սպաներն իրենց ընտանիքներով ճանաչողական այցելություն կատարեցին Մայր Աթոռի թանգարաններ՝ հաղորդակցվելով հայոց դարավոր հոգեւոր սրբություններին, որից հետո հանդիպում ունեցան Նորին Սրբության հետ:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանը՝ շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը մշտապես Հայոց բանակի կողքին լինելու եւ աջակցելու համար:

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետն իր մասնավոր գնահատանքը բերեց հրամանատարներին, սպաներին եւ նրանց ընտանիքներին՝ իրենց հայրենասիրության ու աստվածսիրության համար: Նորին Սրբությունը մասնավորաբար սպաների ուշադրությանը հանձնեց այն հանգամանքը, որ աստվածսիրությունից է բխում հայրենասիրությունը: *«Մեծագույն պատվիրանը, որ Աստված տվեց մեզ, դա սիրո պատվիրանն է. սեր ինչպես միմյանց նկատմամբ, այնպես էլ հայրենիքի, ազգի ու ընտանիքի հանդեպ:*

Շարունակությունը՝ էջ 3

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Հունիսի 19-20-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով:

Ժողովը բացվեց Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի եւ օրհնության խոսքով:

Ժողովի ատենապետներն էին Արեւմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Խաժակ արք. Պարսամյանը եւ Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ եպս Գալստանյանը:

Երկօրյա ժողովի նիստերին քննության առնվեցին առաջիկա Ազգային-եկեղեցական ժողովի կազմակերպմանը, հայրենիքում ու սփյուռքում ազգային-եկեղեցական կյանքին առնչվող մի շարք հարցեր:

Մասնավորապես անդրադառնալով 2020 թվականին գումարվելիք Ազգային-եկեղեցական ժողովին՝ ԳՀԽ անդամները լսեցին ժողովի օրակարգի հարցերի նախապատրաստման նպատակով ստեղծված յոթ հանձնախմբերի աշխատանքների վերաբերյալ զեկույցները:

Զեկույցները ներկայացրեցին թեմական եւ ծխական կյանքի կազմակերպման հանձնախմբի ատենապետ Սեպուհ արք. Չուլջյանը, Հայաստանյայց Եկեղեցու կրթադաստիարակչական առաքելության հանձնախմբի ատենապետ Աբրահամ արք. Մկրտչյանը, սոցիալական ծառայության հանձնախմբի ատենապետ Միքայել արք. Աջապահյանը, Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման եւ ազգային ինքնության պահպանության գործում Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու առաքելության հանձնախմբի ատենապետ Վազգեն եպս Միրզախանյանը, քրիստոնեական արժեհամակարգին նետված մարտահրավերների հանձնախմբի ատենապետ Բագրատ եպս Գալստանյանը, հոգեւորականաց պատրաստության հանձնախմբի քարտուղար Գարեգին վրդ. Համբարձումյանը եւ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու ֆինանսատնտեսական վիճակի բարելավման հանձնախմբի ատենապետ Մուշեղ եպս Բաբայանը:

Քննարկելով ներկայացված զեկույցները եւ կատարելով անհրաժեշտ թելադրությունները՝ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամները, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ՝ բարձրորեն գնահատեցին հանձնախմբերի կողմից կատարված աշխատանքը: Հայրենիքի եւ սփյուռքի հոգեւորական եւ աշխարհական ներկայացուցիչներից կազմված հանձնախմբերը կշարունակեն լրամշակել Ազգային-եկեղեցական ժողովի օրակարգային հարցերը եւ դրանց շրջանակներում քննվելիք փաստաթղթերը:

Ժողովականները լսեցին Մայր տաճարի վերանորոգության ընթացքի մասին զեկույցը, որը ներկայացրեց Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը: Տեղեկացվեց նաեւ Մայր տաճարի ամրակայման եւ հիմնանորոգության աշխատանքների իրականացմանն ի նպաստ՝ Սուրբ Էջմիածնի Կաթողիկեի առաջիկա տոնին մեկնարկող համազգային հանգանակության ծրագրի մասին, որը համակարգվելու է Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից՝ գլխավորությամբ ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանի: Ծանուցվեց հաստատված հոգաբարձուների պատվո հանձնախմբի եւ գործադիր մարմնի մասին:

ԳՀԽ անդամները ողջունեցին ձեռնարկված քայլերը՝ կարեւորելով յուրաքանչյուր հայորդու մասնակցությունն ու ներդրումը համայն հայության Սրբություն Սրբոցի վերանորոգության ու բարեզարդ պահպանման գործում:

Ժողովին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը տեղեկություններ փոխանցեց Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հարաբերությունների հարցերով աշխատանքային խմբի առաջին հանդիպման եւ նախաձեռնված համատեղ քննարկումների մասին՝ իրազեկելով, որ աշխատանքներն ընթանում են բնականոն հունով՝ գործակցային ոգով լուծումներ ապահովելու Եկեղեցու կյանքում առկա զանազան խնդիրներին:

Ժողովին անդրադարձ կատարվեց նաեւ Եկեղեցու կանոնական ու կանոնադրական մի շարք հարցերին:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

ՀՀ ԶՈՒ 5-րդ բանակային կորպուսի զորամիավորումների եւ Արմավիրի կայազորի սպաներին՝ իրենց ընտանիքներով

Սկիզբը՝ էջ 2

Ամեն բան իբրեւ մնայուն արժեք կերտվել է սիրով: Բոլոր մնայուն արժեքները ստեղծվել են մեր հոգում՝ հանդեպ մեր հայրենիքը, մեր Եկեղեցին ու մեր առ Աստված ունեցած սիրուց»,– նշեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ հավելելով, որ հայ զինվորի ու հրամանատարի ծառայությունն ու պայքարն իրենց զավակների, հայրենիքի ապահով եւ խաղաղ կյանքն է:

Գարեգին Բ Վեհափառը կարեւորեց նաեւ Հայոց Եկեղեցու ամուր կապը եւ գործակցությունը ՀՀ Զինված Ուժերի հետ՝ մասնավորապես անդրադառնալով յուրաքանչյուր սպայի կյանքում հոգեւոր սպասավորների դերին, քանի որ վերջիններս ամենօրյա ծառայություն են իրականացնում հայ սպաների հետ՝ նրանց քրիստոնեական ոգին մշտավառ պահելու եւ հոգեւոր արժեքներով սնելու համար:

Իր սերն ու խոնարհումը բերելով ներկա սպաներին՝ իրենց հայրենանվեր ծառայության համար, Վեհափառ Հայրապետը հաստատեց, որ Հայոց բանակի քաջարի զինվորները, հրամանատարները եւ նրանց ընտանիքները հանապազ իր աղոթքներում են:

Վերջում Նորին Սրբությունը մաղթեց, որ Տերն Իր մշտական օրհնության ներքո պահի հայ զինվորականներին եւ նրանց ընտանիքներին, որպեսզի հավատով եւ քաջեռանդ շարունակեն իրենց նվիրյալ ծառայությունը:

ՀՀ ԶՈՒ 5-րդ բանակային կորպուսի անունից ելույթ ունեցավ նաեւ կորպուսի հրամանատար գնդապետ Անդրանիկ Փիլոյանը՝ շնորհակալություն հայտնելով ՀՀ Զինված Ուժերի հանդեպ Վեհափառի մշտական ուշադրության համար:

Հանդիպման ավարտին հոգեւոր եւ ազգային երգերի կատարումներով հանդես եկավ Արարատյան Հայրապետական թեմի Սուրբ Աննա եկեղեցու «Գանձեր» երգչախումբը:

25 հունիսի

N զորամիավորման սպաներին եւ նրանց ընտանիքներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին ուխտավորաբար եկած N զորամիավորման սպաներին եւ նրանց ընտանիքներին:

«Քրիստոնյա ընտանիք՝ պաշտպանված հայրենիք» խորագրով միջոցառումների շրջանակներում N զորամիավորման սպաները եւ նրանց ընտանիքները եւս հնարավորություն ունեցան այցելելու Մայր Աթոռ Ս Էջմիածին, ծանոթանալու թանգարաններում պահվող Հայ Եկեղեցու սրբություններին եւ եկեղեցական արվեստի պատմական արժեքավոր ցուցանմուշներին եւ հանդիպում ունենալու Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ:

Ողջունելով ներկաներին՝ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանը պետության պահպանման եւ հզորացման գործում կարեւոր նկատեց Եկեղեցի-բանակ-ընտանիք կապը, անդրադարձավ հայ ընտանիքի առջեւ ծառացող մարտահրավերներին:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Հայրապետը, ջերմորեն ողջունելով ուխտավոր զինվորականներին, գոհունակությամբ նշեց, որ ուրախ է Ս. Էջմիածնում համախմբված տեսնելու հայ սպաներին՝ իրենց ընտանիքների ուղեկցությամբ: Նորին Սրբությունը փաստեց, որ Հայոց Եկեղեցին մշտապես եղել է հայ զինակցի կողքին եւ զորակցել է նրա հայրենանվեր ծառայությանը՝ հայրենի սահմանները, հայ ընտանիքի խաղաղությունն ու անդորրը պահպանելու գործում:

Խոսելով քրիստոնեական արժեհամակարգի կարեւորության եւ ընտանիքում այդ արժեքների պահպանման մասին՝ Վեհափառ Հայրապետը մասնավորապես արձանագրեց. *«Մեր սահմանների ամրությունը մեր հայ ընտանիքն է: Փորձը ցույց է տվել, որ հսկայական տերություններ անհետացել են պատմության թատերաբեմից ոչ այն պատճառով, որ օտար զավթողներն եկել եւ ստրկացրել են նրանց, այլ այն պատճառով, որ նրանք բարոյական անկում են ապրել, կորցրել են իրենց արժեհամակարգը: Ահա թե ինչու է Եկեղեցին իր առաջնահերթ քարոզչությունն ուղղում դեպի հայ ընտանիքը, որպեսզի այն ապրի Քրիստոսի Ավետարանով: Միայն այդպես է, որ մեր ժողովուրդը կշարունակի իր հաստատուն ընթացքը դարերի հավերժության մեջ»:*

Ընդգծելով, որ Տիրոջ խաչի զորությամբ են դարերի մեջ կերտվել հայոց հաղթանակները՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հավելեց, որ իր աղոթքներում մշտապես հայցում է Տիրոջ հաղթական ս. Խաչի պաշտպանությունը հայ զինվորին:

Նորին Սրբությունը նաեւ իր գնահատանքի խոսքն ուղղեց հայոց բանակի հոգեւոր սպասավորներին՝ գնդերեցներին, քրիստոնեական պատգամներով հայ զինվորի կողքին լինելու եւ նրա ոգին ամուր պահելու համար:

Վերջում Գարեգին Երկրորդ Հայրապետը մաղթեց, որ հայ ընտանիքը, հայոց բանակն ու հայ ժողովուրդը հանապազ աճեն ու զորանան Աստծու սիրո մեջ:

Տոնախմբվեց սուրբ Հռիփսիմյանց, Գայանյանց կույսերի, Հովհաննես Կարապետի եւ Աթանագինես եպիսկոպոսի հիշատակը, նշվեց Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնը



Հունիսի 17-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին տոնախմբեց Ս. Հռիփսիմյանց կույսերի հիշատակը:

Տոնական այդ օրը նաեւ Ս. Հռիփսիմե վանքի ուխտի օրն է: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Ս. Հռիփսիմե վանք տարվեց սրբուհու մասունքն ամփոփող Աջը:

Առավոտյան, միածնաէջ Մայր տաճարի առջեւից, եկեղեցականները՝ ուխտավորների ուղեկցությամբ, Էջմիածնի «Հրաչ եւ Սյուզան Թուֆյան» հայորդյաց տան սաների թմբուկների զարկերի ներքո, ավանդական դարձած հանդիսավոր թափորը շարժվեցին դեպի Ս.Հռիփսիմե վանք՝ տանելով սուրբ Հռիփսիմեի մասունքները: Սուրբ Գրիգոր Լուսավորչի կամարի առջեւ Ամենայն Հայոց Հայրապետը, սրբազան Աջով օրհնելով հոգեւոր դասին եւ ներկա բարեպաշտ ժողովրդին, այն փոխանցեց Մայր Աթոռի լուսարարապետ Հովնան եպս Հակոբյանին:

Ս. Հռիփսիմե վանքի առջեւ թափորը դիմավորեցին վանքի հոգեւոր սպասավորները եւ տարբեր համայնքներից ժամանած բազում հավատացյալները՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վանորեից տեսուչ Արտակ եպս Տիգրանյանի գլխավորությամբ:

Տոնի առիթով վանքում մատուցվեց Պատարագ: Պատարագիչն էր Հունաստանի Հայոց թեմի առաջնորդական տեղապահ Խորեն վրդ. Առաքելյանը:

Պատարագի ընթացքում օրվա խորհրդի շուրջ քարոզեց Արցախի թեմի Ամարասի վանքի վանահայր Գեղարդ աբեղա Հովհաննիսյանը:

Հայր սուրբն ընդգծեց, որ Ս. Հռիփսիմյանց տոնը եւ կույսերի վկայաբանությունը գալիս է մեկ անգամ եւս քրիստոնյաներին թելադրելու ապրել Քրիստոսով, Նրա սիրո համաձայն եւ լինել կատարյալ:

«...Սիրելիներ, մեր կյանքից ներս կատարելության միջոցները բազում են. մեկը կասի՝ աղոթք, մյուսը կասի՝ ապաշխարություն, երրորդը կասի՝ սեր, չորրորդը՝ եղբայրասիրություն, խոնարհություն, հեզություն եւ տարբեր-տարբեր բաներ: Այդ ամենը միջոցներ են: Կատարելությունն Աստծուն նմանվելն ու պատկերն ունենալն է:

Ինչպե՞ս դա կարող է լինել, եթե սեր չունենանք մեր մեջ: Ինչպե՞ս դա կարող է լինել, եթե մենք կանգնում ենք սուրբ Պատարագի, կուրծք ենք ծեծում եւ ասում՝ Տեր, ների՛ր ինձ մեղավորիս, արժանացրո՛ւ Սուրբ Հաղորդությանը, բայց չենք աղոթում կողքինի համար, չենք աղոթում մեկս մյուսի համար:

Սուրբ Հռիփսիմյանց վկայաբանությունը դա է: Այսօրվա խորհուրդը դա է: Նրանք չառանձնացան, միասնաբար նահատակության պսակն առան՝ առանց դրժելու իրենց ուխտը Քրիստոսի հետ, առանց դրժելու իրենց առաքելությունն այս աշխարհի վրա, որ կոչվում է քրիստոնյայի կյանք»,– ասաց հայր Գեղարդը:

Նա նաեւ հավելեց, որ սրբերի վկայաբանությունից հավատացյալները սովորում են նաեւ Քրիստոսի՝ սիրի՛ր քո Տեր Աստծուն եւ սիրի՛ր քո ընկերոջը՝ երկու կարեւորագույն պատգամները, որոնց շնորհիվ քրիստոնյան կարող է հասնել կատարելության:

Ս. Պատարագի ավարտին, հանդիսապետությամբ Վանորեից տեսուչ Արտակ եպս Տիգրանյանի, կատարվեց սրբուհու մասունքակիր Աջով հավատացյալների օրհնություն եւ Անդաստանի կարգ:

Իսկ հունիսի 18-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնեց Ս. Գայանյանց կույսերի հիշատակը:

Տոնի առիթով առավոտյան Մայր տաճարից եկեղեցականների հանդիսավոր թափորը կրկին Էջմիածնի հայորդյաց տան սաների թմբուկների զարկերի ներքո առաջնորդվեց Ս. Գայանե վանք: Թափորը մինչեւ Ս. Գրիգոր Լուսավորչի կամար գլխավորեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ նահատակ սրբուհու մասունքն ամփոփող Աջով օրհնելով բարեպաշտ ժողովրդին: Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը մասունքակիր Աջը փոխանցեց լուսարարապետ Հովնան եպս Հակոբյանին:

Ս. Գայանե վանքի առջեւ թափորը դիմավորեցին Մայր Աթոռի Վանորեից տեսուչ Արտակ եպս Տիգրանյանը, վանքի հոգեւոր սպասավորներն ու բազմաթիվ ուխտավորներ:

Ս. Գայանե վանքում, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Պատարագ: Պատարագիչն էր Հառիճավանքի Թրբանճյան ընծայարանի տեսուչ Ղեւոնդ աբեղա Սաղաթելյանը:

Օրվա խորհրդի շուրջ քարոզ խոսեց Եգիպտոսի Հայոց թեմի հոգեւոր սպասավոր Դերենիկ աբեղա Սահակյանը:

Հայր սուրբը, անդրադառնալով ս. Գայանյանց կույսերի հավատավոր կյանքին եւ նահատակության պատմությանը, մասնավորապես նշեց. *«Տոնական այս Պատարագն իր մեջ ոչ միայն սրբություն ունի, այլ նաեւ սրբազան խորհուրդ: Սրբերը տարբերվում են մարդկանցից այն պարզ եւ միեւնույն ժամանակ բաղձալի խորհրդով, որ նրանք գտան Քրիստոսին եւ չկորցրեցին: Այսօրվա տոնի մեջ ամենամեծ խորհուրդն այն է, որ սուրբ կույսերը կտտանքի, չարչարանքի, անմարդկային տանջանքների ենթարկվելու ընթացքում չկորցրեցին Քրիստոսին»:*

Հայր Դերենիկը կոչ արեց հավատացյալներին Քրիստոսին չկորցնելու համար լինել առավել զգուշավոր եւ ուշադիր, զորանալ հոգեւոր կյանքի մեջ:

Վերջում հայր սուրբը հորդորեց հավատացյալներին անկեղծ աղոթքով հայցել ս. Գայանեի բարեխոսությունը, որպեսզի նա իր շնորհներով զարդարի նրանց միտքը, հոգին ու սիրտը՝ Քրիստոսին գտնելու եւ Նրան երբեւէ չկորցնելու համար:

Ս. Պատարագի ավարտին Ս. Գայանե վանքի բակում, Արտակ սրբազանի նախագահությամբ, կատարվեց սրբուհու մասունքակիր Աջով հավատացյալների օրհնություն եւ Անդաստանի կարգ:

Սուրբ Պատարագին մասնակցում էին միաբանական համագումարի առիթով աշխարհի բոլոր կողմերից Ս. Էջմիածին ժամանած Մայր Աթոռի միաբանները:

Հունիսի 20-ին Ս. Հովհաննես Կարապետի եւ Ս. Աթանագինես եպիսկոպոսի տոնն էր, որը նաեւ Էջմիածնի Ս. Շողակաթ վանքի ուխտի օրն էր:

Ս. Հովհաննես Մկրտչի մասունքն ամփոփող խաչ-մասունքարանը առավոտյան Մայր Աթոռից Ս. Շողակաթ վանք տարվեց եկեղեցականների հանդիսավոր թափորով: Սրբազան մասունքը կրում էր ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի հոգեւոր սպասավոր Օշական վրդ. Կյուլկյուլյանը:

Ս. Շողակաթ վանքի առջեւ թափորը դիմավորեցին բազմաթիվ ուխտավորներ՝ Մայր Աթոռի Վանորեից տեսուչ Արտակ եպս Տիգրանյանի գլխավորությամբ:

Տոնի կապակցությամբ վանքում մատուցվեց Պատարագ: Պատարագիչն էր Վիրահայոց թեմի Ախալցխեի եւ Բորժոմիի տարածաշրջանի հոգեւոր տեսուչ Հակոբ աբեղա Սահակյանը:

Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի Սանկտ Պետերբուրգի եւ Ռուսաստանի Հյուսիսարեւմտյան շրջանի առաջնորդական փոխանորդ Պողոս աբեղա Վարդանյանն իր քարոզում անդրադարձավ տոնի խորհրդին: *«Մենք, լինելով քրիստոնյա, լավագույն կերպով գիտակցել եւ իմացել ենք այն գինը, որ Քրիստոս խաչի վրա Իր արյամբ վճարեց մեզ փրկություն պարգեւելու համար: Եվ այդ գնով պայծառացել ու լուսավորվել են թե՛ մեր հոգիները, թե՛ մեր մարմինները: Մեր ազգը լավագույնս գիտակցել է Հռիփսիմյանց եւ Գայանյանց կույսերի թափած արյան գինը, լավագույնս գիտակցել է ս. Գրիգոր Լուսավորչի Խոր Վիրապում կրած չարչարանքների արժեքը եւ արժեւորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնից եկած լույսն ու հավատը եւ ապրել դրանով դարեդար»,*– ասաց հայր Պողոսը՝ հորդորելով հավատացյալներին հայցել Աստծուց ուժ, կարողություն եւ իմաստություն՝ մեր նախնիների դարավոր հավատքի համաձայն ապրելու համար:

Պատարագի ավարտին կատարվեց նաեւ ս. Հովհաննես Մկրտչի մասունքակիր խաչով հավատացյալների օրհնություն եւ Անդաստանի կարգ՝ Արտակ եպս Տիգրանյանի հանդիսապետությամբ:

Հունիսի 23-ին նշվեց Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունը՝ գլխավորությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Պատարագի սրբազան արարողությանը մասնակցեց Սուրբ Գայանե վանքում: Պատարագիչն էր Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը:

Պատարագի արարողությանը ներկա էին հայաստանյան թեմերի առաջնորդները, Մայր Աթոռի տարբեր կառույցներում պաշտոնավարող եպիսկոպոսները, այս օրերին Ս. Էջմիածնում գումարված միաբանական հավաքի մասնակիցները, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից եւ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունից ժամանած միաբանները, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամները, Էջմիածնի քաղաքապետ Դիանա Գասպարյանը, Հայ Եկեղեցու բարերարները,

սփյուռքից ու Հայաստանի տարբեր համայնքներից ժամանած բազմաթիվ ուխտավորներ:

Պատարագի ընթացքում «Էջ Միածինն ի Հոր» շարականի երգեցողության ներքո ս. Խորան բարձրացվեց եւ Մուշեղ սրբազանի կողմից ընթերցվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական սրբատառ կոնդակը՝ Մայր տաճարի հիմնանորոգությանն ու բարեզարդ պահպանությանն ի նպաստ կազմակերպվող համազգային հանգանակության առիթով:

Կոնդակում մասնավորապես ասված է.

Շարունակությունը՝ էջ 5

Միաբանական համագումար Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Հունիսի 18-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ՝ Մայր Աթոռում սկսվեց միաբանական համագումար, որին մասնակցում էին տարբեր երկրների թեմերում եւ համայնքներում ծառայություն իրականացնող Մայր Աթոռի միաբանները (ծ. վարդապետ, վարդապետ եւ աբեղա): Համագումարը նախագահում էր Մայր Աթոռի լուսարարապետ Հովնան եպս Հակոբյանը:

Համագումարին մասնակցում էին նաեւ ներկայացուցիչներ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից ու Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունից:

Բացման խոսքով հանդես եկավ համագումարի կազմակերպիչ Օշական վրդ. Կյուլկյուլյանը (ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմ):

Հայր սուրբն իր ուրախությունը հայտնեց համագումարի անցկացման առիթով, որի շնորհիվ միաբաններին լավագույն հնարավորությունն է ընձեռնվում միասին աղոթելու, իրենց ուխտը վերանորոգելու Աստծո եւ Հայ Առաքելական Ս. Եկեղեցու հանդեպ, Տիրոջով զորանալու, իրենց հավատարմությունը հայտնելու Ամենայն Հայոց Հայրապետին եւ նրա մյուռանաբույր Աջից մշտապես բաշխվող առաքելական օրհնությամբ տոգորվելու:

«Այս պահն անկրկնելի եւ քաղցր հիշողություններ է արթնացնում մեզանից յուրաքանչյուրի հոգում, քանզի անկախ մեր ծառայության վայրից, աստիճանից եւ զանազան հանգամանքներից, մեր սրտի մեկ մասնիկը մշտապես այստեղ է՝ միածնաէջ այս սրբավայրում, ուր դարեր շարունակ հնչում եւ հնչելու է Մայր Աթոռիս միաբանության անդադար աղոթքը՝ «վասն խաղաղութեան եւ անսասանութեան ազգիս հայոց եւ եկեղեցւոյս մերոյ»: Այդ սուրբ մասնիկն է, որ մեզ հույս է տալիս, առաքելության մեջ հաստատուն պահում եւ զորացնում: Անհերքելի է, որ մեր տան հանդեպ կարոտի այդ զգացողությունն աննկարագրելի եւ անպատմելի է, որն ամեն անգամ ինքնատիպ առկայծում եւ բոցավառվում է, երբ միասին ենք՝ միասիրտ, միաբան եւ միախորհուրդ: Ամենքս էլ կոչված ենք Աստծո խոսքը քարոզելու, Ավետարանի անխարդախ կաթը ջամբելու եւ մեր ժողովրդին փրկության առաջնորդելու՝ դաստիարակելով եւ կրթելով մշտամնա արժեքներով: Բայց, սիրելիներ, այս առաքելությունն առավել արդյունավոր է, երբ միասին ենք՝ մեկ հոգի եւ մեկ սիրտ ու Հայոց Եկեղեցու անդամներ: Եղբայրության կապերը ոչ միայն միացնում են մեզ, զորացնում եւ նոր ուժ տալիս, այլեւ մեզ անպարտելի են դարձնում յուրաքանչյուր մարտահրավերի կամ խնդրի առաջ: Ուր էլ լինենք, ուր էլ գնանք, երբեք չպետք է կորցնենք կամ թուլացնենք մեր կապը Սուրբ Էջմիածնի հետ, որը մեր կոչման եւ հոգու ներշնչանքն է, զորացման աղբյուրն ու կյանքի ավիշը:

Սուրբ Էջմիածնի միաբան լինելը պատասխանատվություն է, հանձնառություն, կոչման բարձր գիտակցություն եւ մեր սրբազան ուխտը՝ ծառայելու Հայոց Եկեղեցուն եւ աստվածասեր մեր ժողովրդին: Ծառայասիրության եւ կոչման դեպքում մնացած ամեն ինչ երկրորդական է դառնում, քանզի գիտակցում ես, որ Սուրբ Էջմիածնի զավակն ես, ասել է թե՝ կրողն աստվածային Ճշմարտության»,– նշեց հայր Օշականը՝ հավելելով, որ վերադարձը Մայր Աթոռ Ս. Էջմիածին նորովի հայացք է մեր քրիստոնեական եւ ազգային ինքնությանը, մեր կոչմանն ու առաքելությանը, այսինքն՝ դարձ դեպի մեր էությունը:

Բացման խոսքին հաջորդեց համագումարի օրակարգի քննարկումը, ապա տեղի ունեցավ միաբանական համագումարի դիվանի ընտրություն: Ատենապետ ընտրվեց Սասուն ծ. վրդ. Զմրուխտյանը (ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմ), ատենադպիրներ՝ Թովմա վրդ. Խաչատրյանը (Հայ Եկեղեցու Համաշխարհային Երիտասարդաց Միության (ՀԵՀԵՄ) հոգեւոր տեսուչ եւ կենտրոնական գրասենյակի տնօրեն) եւ Դերենիկ աբեղա Սահակյանը (Եգիպտոսի Հայոց թեմ):

Շարունակությունը՝ էջ 6

...նշվեց Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնը

Սկիզբը՝ էջ 4

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ ՔՐԻՍՏՈՍԱՓԱՌՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ

ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԵԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԼԻ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ»
(Շարական):

Առ Աստուած գոհաբանական մաղթանքով եւ Սուրբ Էջմիածնի տօնի բերկրութեամբ հայոց նուիրական Մայր Աթոռից հայրական Մեր սէրն ու Հայրապետական օրհնութիւնն ենք բերում հաւատաւոր մեր ժողովրդին՝ ի հայրենիս եւ ի սփիւռս:

Հաւատքի ճշմարիտ լոյսը, որ հայոց երկրում ծագել էր Սուրբ Թադէոս եւ Բարդուղիմէոս առաքելների քարոզչութեամբ, նորովի ճառագայթեց մեր ժողովրդի կեանքում: Առաքելապատիւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի տեսիլքով, Սուրբ Տրդատ թագաւորի ջանքերով ու հաւատացեալների ոգեշունչ մասնակցութեամբ վեր խոյացաւ համայն հայութեան Սրբութիւն Սրբոցը, մեր հաւատքի յաւերժական ջահը, Աստուծոյ հետ մեր անխախտելի ուխտի եւ աներեր հաւատարմութեան հիասքանչ վկայարանը՝ Սուրբ Էջմիածինը: Մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի էջքով աստուածային երկնառաք պարգեւներն ընդունեց մեր երկիրն ու ժողովուրդը:

Մայր Տաճարը հոգեղէն գեղեցկազարդ մարգարիտն է մեր հաւատքի անդաստանում, եւ ազգիս զաւակաց սրտերը ի սփիւռս աշխարհի կապուած են այս անգին գանձին: «Ի վերայ Աջոյն եւ Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կան»,– պատկերաւոր նկարագրում է պատմիչը՝ մեր ժողովրդի դարաւոր էջմիածնասէր զգացումների բիւրեղացումը ամփոփելով այս վկայութեան մէջ: Արդարեւ, մեր ազգային-հոգեւոր կեանքում Սուրբ Էջմիածինը դարձել է աստուածահիմն ակունքը ամենայն օրհնութիւնների, առատաբուխ աղբիւրը հոգեւոր բարեզարդութիւնների, բաշխողը Սուրբ Հոգու շնորհաց, առհաւատչեան սրբալոյս միւռոնի, քաջալերողն ու նորոգողը հայոց հաւատքի: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ հրաշակերտ իր տաճարով, եղել է եւ միշտ կլինի ազգիս՝ Միածնի էջքով պսակեալ հոգեւոր սուրբ կենտրոնը, սերնդէ սերունդ փառքն ու պարծանքը, նուիրագործուած ու փայփայուած հայոց Բեթղեհէմը:

Դարերի ընթացքին մեր ժողովուրդը՝ միշտ ունկնդիր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ» կոչին, եկեղեցանուէր ոգով ու նախանձախնդրութեամբ նորոգել, բարօր ու շէն է պահել Սուրբ Էջմիածինը՝ որպէս քարեղէն վկայութիւն իր հոգեղէն ապրումների եւ նուիրական զգացումների, որպէս տաճարացում առ Բարձրեալն Աստուած մեծագոյն սիրոյ եւ ձգտումի: Ժամանակների հոլովոյթում Հայոց Հայրապետների հոգածութեամբ Մայր Տաճարը շարունակաբար բարեզարդուել է որմնանկարներով ու սրբապատկերներով, խորանների, զանգակատների եւ աւանդատների կառուցմամբ, նուիրական սրբավայրի հանդէպ մշտական խնամքով, որպէսզի յաւէտ փայլի ու շողարձակի Քրիստոսահաստատ սրբօրրանը, «քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

Լուսաւորչի հրաւէրն այսօր էլ արձագանքում է մեր կեանքում՝ բարգաւաճ ու պայծառ պահելու համայն հայութեան հոգեւոր սուրբ կենտրոնը: Մայր Տաճարը այսօր խիստ կարօտ է վերանորոգման, ամրակայման հրատապ աշխատանքների, որպէսզի զերծ մնայ փլուզման վտանգից: Մեր նուիրական սրբավայրը պահպանելու եւ ամրացնելու, պայծառակերպ բարեզարդելու նպատակով՝ Մայր Աթոռում արդէն իսկ սկսուած են անհրաժեշտ նորոգութիւնները: Պահանջուող վերանորոգման աշխատանքները, սակայն, ծաւալուն են, եւ կարիքը կայ մեծ միջոցների, համայն հայութեան աջակցութեան: Եւ այժմ, սիրելիներ, Մենք ենք դիմում ձեզ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ» կոչով: Եկէք միասնաբար նորոգենք մեր ազգային-եկեղեցական կեանքի Սուրբ Խորանը՝ Մայր Տաճարը Սուրբ Էջմիածնի: Ձեր հոգու ջերմ զգացումներով, որ տածում էք հանդէպ Մայր Աթոռը, ձեր նպաստն ու ներդրումը բերէք մեր Սրբութիւն Սրբոցի վերանորոգման գործում, քանզի Սուրբ Էջմիածինը, որ միշտ սնել ու զօրացրել է բարեպաշտ զաւակներիդ ի հոգեւորս, այսօր ձեր կարիքն ունի, որպէսզի յարատեւ շարունակի իր առաքելութիւնը մեր ժողովրդի կեանքում: Սուրբ Էջմիածնով միշտ պիտի ամուր պահենք մեր ուխտն առ Աստուած եւ մնանք համախմբուած հայրենիքի, ազգի եւ եկեղեցու սիրով ու մեր նուիրական արժէքներով: Վստահութիւնն ունենք եւ հաւատում ենք, որ մենք կանք եւ մնացել ենք այն ազգը, որի հաւատոյ հռչակումն անփոփոխ է յանդիման ժամանակների, փորձութիւնների եւ դժուարութիւնների. «Մեզ հայր ճանաչում ենք Սուրբ Աւետարանը, եւ մայր՝ Առաքելական Սուրբ Եկեղեցին»: Այս նախանձախնդիր ոգով, սիրելի զաւակներ Մեր, ձեր աջակցութիւնը բերէք Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի նորոգութեանը՝ գնահատարժան գործեր յաւելելով ձեր բարեպաշտ կեանքին ու վաստակին:

Մայր Տաճարի նորոգութեան համար բերուող օգնութիւնները համակարգելու նպատակով՝ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի կողմից հաստատուել է աշխատանքային խումբ՝ ԱՄՆ Հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի գլխաւորութեամբ: Մեր յորդորն է աշխարհասփիւռ մեր թեմերին, ծուխերին, հաւատաւոր հայորդիներին ըստ ամենայնի գործակցելու Մայր Տաճարի նորոգութեան աշխատանքային խմբի հետ՝ սրտաբուխ նուիրատուութիւններով ու զօրակցութեամբ մասնակցութիւն բերելու Քրիստոսահիմն մեր Սրբավայրի բարենորոգութեան նուիրական գործում:

Ի խորոց սրտի աղօթում ենք, որ Բարձրեալ Տէրը Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքոյ պահպանի ձեզ, սիրելի հաւատաւոր եւ հաւատարիմ զաւակներ Մեր, պարգեւի բիւր բարիքներ եւ ամուր պահի եկեղեցանուիրումի, ազգանուիրումի ու հայրենասիրութեան ձեր ոգին: Թող Աստուծոյ շնորհները հովանի լինեն ազգիս հայոց եւ միշտ խաղաղ ու անսասան պահեն մեր հայրենիքը, ամուր՝ մեր պետականութիւնը, յաւէտ շէն ու պայծառ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին:

«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի Քո անշարժ պահեա՛, եւ զերկրպագուս անուանդ Քում պահեա՛ ի խաղաղութեան». ամէն:

Օրհնութեամբ՝
ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 23-ն Յունիսի
յամի Տեառն 2019 եւ ի թուին հայոց ՌՆԿԸ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1079

Պատարագի սրբազան արարողության ավարտին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, կատարվեց Ս. Էջմիածնի մաղթանք:

Ներկա հավատացյալ ժողովուրդը եւ եկեղեցականաց դասն աղոթք բարձրացրեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հարամնա պայծառության, անսասանության եւ հայոց ազգի կյանքում իր սրբազան առաքելության արդյունավորման համար:

ԼԵՌ ԿԱՄՍԱՐ. «Խորհրդային օրեր» անտիպ օրագրից

Երկուշաբթի, 12 սեպտեմբեր.

– Եթե ճիշտ է, որ «մահն ընկերով հարսանիք է», ուրեմն եւ կյանքն էլ առանց ընկեր մահ է:

Եվ ճիշտ այդպես էլ է: Իմ կյանքը մահ է հիմա, որովհետեւ ոչ մի կենդանի ընկեր չունեմ:

Էջմիածնի ճեմարանում սովորելիս դասընկերներս 30 հոգի էին: Դրանցից մեկն է միայն բնական մահով մեռել: 26-ը սպանված են թուրքական եւ բոլշեւիկյան կառավարությունների ձեռքով, երեք հոգի էլ պատահմամբ ողջ ենք մնացել, ինչպես երեք ցողուն կարկտահարված արտի մեջ…

Այդ 26 ընկերներիցս միայն հինգին հաջողվեց թուրք կառավարության կողմից ջարդվել, իսկ մնացյալ 21-ը բոլշեւիկյան «հայ» կառավարությունը ջարդեց հարյուր հազարավոր ազգային ոգով կրթված բանիմաց հայերի հետ միասին:

Ուրեմն, մեր պատմագիրների թված հայ ազգի թշնամիների՝ պարսիկների, հույների, արաբների, սելջուկների թվին պետք է ավելացնել նաեւ հայերի անունը: Հայեր, որոնք ավելի անողորմ կոտորեցին, քան մյուս թշնամիները: Որովհետեւ նրանք ձմերուկի նման ջոկեցին մեր ազգի հասուն, արժեքավոր մասը ջարդեցին, իսկ մյուսները խառնիխուռն՝ ով ձեռքն ընկավ: Այնպես որ բոլշեւիկյան հայ կառավարությունը կարելի է որակել որպես «որակյալ ջարդարար»:

Սրանից հետո էլ ի՞նչ խոսք կարող է լինել «անկախ» կամ «կախված» Հայաստանի մասին. էլ մեր ի՞նչը կախենք կամ չկախենք:

Սրանից հետո խոսք կարող է լինել միայն ծախված Հայաստանի մասին:

Ես ամաչում եմ, որ կենդանի եմ: Ես պատվազգաց մարդ եմ եւ խորապես գիտակցում եմ, որ ավելորդ է իմ ապրելը: Կամեցա մեռնել աքսորավայրում, բայց այնտեղ չոր հող չկար մեջը պառկելու համար. բեւեռային ճահիճ, ձնախառն սառցաջուր: Եկ ու այդ պաղ ջրի մեջ հավիտյանս պառկիր: Երեւան եկա, այստեղ էլ շատ շոգ է, գերեզմանի մեջ մարդու շունչը կարող է կտրվել:

Բարեխառն գոտի ընկնելուս պես պիտի մեռնեմ, ապահով եղեք:

1949 թ. դեկտեմբեր Շաբաթ 17.

– Ես այնքան սակավ եմ հայելի նայում, որ եթե փողոցում հանդիպեմ ինձ՝ գուցե չճանաչեմ: Եվ իրավունք ունեմ այդպես վարվելու: Մարդս ինչքան իրենից հեռու պահի ինքզինքը՝ այնքան երջանիկ կլինի: Այսօր պատահմամբ ինքս ինձ այցելեցի հայելում, եւ սիրտս բեկվեց իզուր տեղը: Դեմքիս վրա ծերությունն ու երիտասարդությունը հրաժեշտ էին տալիս իրար: Երիտասարդությունը «<>ը հանձնում էր» արդեն, իսկ ծերությունը ցուցակով ընդունում էր: 16 հազար մազ՝ կեսը սեւ, կեսը ճերմակ, մի ոսկրացած քիթ, երկու մարած աչքեր, աշնան տերեւի նման դեղնած երկու ականջներ, մի բերան՝ մեկումեջ ատամներով:

Այո՛, այո՛, ծերությունն ու երիտասարդությունս երեսիս վրա իրար ձեռք էին սեղմում ու «մնաս բարով», «երթաս բարով» էին ասում իրար:

– Ջահելությո՛ւն,– ասում եմ մտքումս,– մի՛ հանձնիր ինձ ծերության ձեռքը, նա ինձ գերեզման կտանի:

Բայց ի՞նչ կարող է անել խեղճ ջահելությունը, նրան էլ հրամայված է...

Իրիկունը պառկելիս գզգզված շալվարս պարզեցի աղջկաս կարկատելու:

– Էհ, պապա՛,– բարկացավ հանկարծ աղջիկս,– մի նորն առ, այս շալվարը չի լինի կարկատել այլեւս:

– Աղջի՛կս, սիրելի՛ս,– ասում եմ իրեն,– դու Բժշկական համալսարանի երրորդ կուրսի ուսանող ես. ավարտելիս վիրաբույժ պիտի դառնաս: Իսկ գիտե՞ս, ինչ է վիրաբուժություն, խիրուրգիա: Դա ամբողջովին կարկատանի գործ է:

Շարունակությունը՝ էջ 7

Լոս Անջելեսի ՀԲԸՄ Մանուկյան-Դեմիրճյան դպրոցի աշակերտները Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

ՀՈՒՆԻՍԻ 14-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնում Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների բաժնի պատասխանատու Նաթան արք. Հովհաննիսյանը եւ Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանը ընդունեցին Լոս Անջելեսի ՀԲԸՄ Մանուկյան-Դեմիրճյան դպրոցի 10-րդ դասարանի աշակերտներին՝ ուղեկցությամբ դպրոցի տնօրեն Արփի Ավանեսյանի եւ մի խումբ ուսուցիչների:

Հանդիպումը սկսվեց Տերունական աղոթքով, որից հետո Նաթան արք. Հովհաննիսյանը ողջունեց ներկաներին՝ կարեւորելով նման այցելությունները: Դրանք մշտապես կապում են հայ երիտասարդին հայրենիքի հետ եւ դրանց շնորհիվ նրանք դառնում են քրիստոնեության պատմության ողջ ընթացքի անբաժան մասը:

«Այսօր դուք Ս. Էջմիածնով եք արդեն միախառնվում հայ ազգին, որից հետո բաժանվելն այլեւս անհնար է: Սա ազգային արմատներին եւ ինքնությանը վերադառնալու կարեւորագույն քայլերից է, որն առաջնային նշանակություն ունի համաշխարհայնացման այս դարաշրջանում: Առանց մշակույթի, ավանդույթների եւ ինքնության մարդն անհասկանալի մեկն է: Այդ իսկ պատճառով շատ կարեւոր է կարողանալ ճանաչել եւ պահպանել դրանք: Սա եւս մեկ առիթ է, որ ամրանաք ձեր հայ լինելու մեջ»,– ընդգծեց Նաթան արքեպիսկոպոսը:

Ավարտելով խոսքը՝ սրբազանը երիտասարդներին պատգամեց այս ուխտը հավատարմության եւ սիրո ուխտ դարձնել, քանի որ Սուրբ Էջմիածին եկող ուխտավորը նորոգում է իր հայ մնալու եւ ազգայինին հավատարիմ մնալու ուխտը: Առանց հավատարմության չկա սեր եւ առանց սիրո՝ հավատարմություն՝ հաստատեց Նաթան սրբազանը՝ հավելելով, որ սրանք են ազգային ինքնության պահպանման գործի հիմքերը:

Ուխտավորներին ողջունեց նաեւ Զաքարիա ծ. վարդապետը՝ կարեւորելով յուրաքանչյուր հայի մեջ հայրենիքի զգացողություն ունենալը: Նա մաղթեց, որ այս ուխտագնացությամբ աշակերտները զգան հայրենի հողի զորությունը եւ այդ զորությունն ու սերը տանեն այլ երկրներում բնակվող մյուս հայրենակիցներին:

Հանդիպմանը դպրոցի հայոց լեզվի եւ պատմության ուսուցիչ Հովհաննես սրկ. Գյումրույանը, նշեց, որ աշակերտների մեծ մասն առաջին անգամ է Հայաստանում: Իրենց դպրոցում գեղեցիկ ավանդույթ է ձեւավորվել, ըստ որի, 10-րդ դասարանի աշակերտները ուխտավորաբար այցելում են Հայաստան եւ անպայմանորեն Սուրբ Էջմիածին՝ ծանոթանալու պատմական, ազգային, հոգեւոր եւ մշակութային արժեքներին:

Մայր Աթոռ այցելության ընթացքում ուխտավորները ներկա գտնվեցին նաեւ ՀՀ ազգային հերոս Ալեք Մանուկյանի եւ տիկին Մարի Մանուկյանի շիրիմի առջեւ մատուցված հոգեհանգստյան արարողությանը:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Միաբանական համագումար Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Սկիզբը՝ էջ 5

Միաբանական համագումարի մասնակիցներին ողջունեցին եւ հոգեւոր ծառայության վերաբերյալ իրենց մտորումները ներկայացրեցին նաեւ Նվիրապետական Աթոռների ներկայացուցիչները՝ Պետրոս վրդ. Մանուելյանը (Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն) եւ Եղիշե վրդ. Ուճքունյանը (Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքություն):

Համագումարի առաջին օրը փակվեց Հովնան սրբազանի «Պահպանիչ» աղոթքով:

Քառօրյա ժողովի ընթացքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանները քննարկեցին Եկեղեցու առջեւ ծառացած զանազան մարտահրավերներ, լսեցին տարբեր զեկույցներ:

Հունիսի 19-ին համագումարի մասնակից միաբանները հովվական առաքելությամբ մեկնեցին Գեղարքունյաց թեմի տարբեր հեռավոր համայնքներ, այցելություններ կատարեցին մասնավորապես կարիքավոր ընտանիքներին:

Հունիսի 21-ին նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկա գտնվեց համագումարի նիստին՝ իր օրհնությունն ու պատգամը բերելով համագումարի մասնակիցներին:

Նորին Սրբությունը գեղեցիկ ավանդույթ նկատեց միաբանական հավաքի գումարումը Արարատյան տոների շրջանում, որը պսակվում է Սուրբ Էջմիածնի Կաթողիկեի տոնով, երբ աշխարհի տարբեր կողմերից միաբանները համախմբվում են Մայր Աթոռում՝ իրենց ուխտը նորոգելու, զորանալու, ինչպես նաեւ անդրադառնալու Սուրբ Էջմիածնի առաքելությանը: Խոսելով սրբության խորանը կառուցելու Լուսավորիչ Հայրապետի կոչի եւ Սուրբ Էջմիածնից մեր ժողովրդի կյանքում դարեր շարունակ ջամբվող տերունապատվեր պատգամների մասին՝ Վեհափառ Հայրապետը հաստատեց. *«Հայ Եկեղեցու յուրաքանչյուր սպասավոր, անկախ իր միաբանական պատկանելությունից, Սուրբ Էջմիածնի ուխտի միաբան է եւ Սուրբ Էջմիածնի առաքելության սպասավոր: Ահա, այս պատիվն ունենք մենք ամենքս՝ սպասավորները լինելու Սուրբ Էջմիածնի առաքելության, շարունակողները մեր սուրբ, նվիրյալ հայրերի ու հայրապետների գործի, որոնք կերտել են մեր ժողովրդի փառքը, ուղենշել այն ճանապարհը, որ երաշխավորել է մեր ժողովրդի անմահության ընթացքը:*

Մեր լուսամիտ հայրապետները Սուրբ Էջմիածնի առաքելությունը դարձրել են ձեռագիր մատյաններ, տաճարներ ու վանքեր, դարձրել են մեր ժողովրդի համար արքայության ճանապարհ, անգամ եթե մեր պատմության ընթացքում այդ ճանապարհը ստիպված ենք եղել անցնելու գողգոթաներով: Սուրբ Էջմիածնի առաքելությունը մեր հայրապետների իմաստությամբ նաեւ ուժ ու զորություն է եղել մեր ժողովրդի զավակների համար, որպեսզի հավատով կերտեն մեր պետականությունը: Այսօր այդ առաքելության շարունակողները մենք ենք: Ինչպես հաստատեցինք՝ մեծ պատիվ է դա, որ յուրաքանչյուրս պիտի ընկալենք եւ ամենայն պատասխանատվությամբ պիտի մոտենանք մեր առաքելությանը, որպեսզի մեր Եկեղեցին լինի պայծառ, մեր ժողովուրդը փարված մնա մեր հայրերի սուրբ հավատքին ու անխաթար պահի այն հատկապես ներկա ժամանակներում, երբ կան այսչափ մարտահրավերներ, գայթակղեցնող հրապույրներ, որոնք շեղում են հավատացյալին իր ուղիղ ճանապարհից, առ Աստված առաջնորդող իր ընթացքից»:

Հայոց Հովվապետը խոսեց նաեւ Ս. Էջմիածնի միավորող ուժի ու միասնության խորհրդի մասին՝ ընդգծելով, որ Ս. Էջմիածինն ազգի միասնականության խորհրդանիշն է, որովհետեւ Ս. Էջմիածինն այնտեղ է, որտեղ մեր ժողովրդի զավակները կայք են հաստատել եւ ապրում են, Ս. Էջմիածինն այնտեղ է, որտեղ հայ եկեղեցականն իր սպասավորությունն է բերում մեր ժողովրդին: Ըստ Վեհափառի խոսքի՝ Ս. Էջմիածինը Քրիստոսի Ավետարանն է, որ տրվեց ս. Գրիգոր Լուսավորիչ Հայրապետին, Ս. Էջմիածնի լույսն ամենուր է եւ ճառագում է մեր ժողովրդի հոգիներից ներս՝ կապելով նրանց մեր սուրբ հայրենիքին:

Վերահաստատելով Առաքել Դավրիժեցու խոսքը՝ Նորին Սրբությունը նշեց, որ մեր ժողովրդի յուրաքանչյուր զավակի հոգին, սիրտը, միտքը կապված է Ս. Էջմիածնի եւ մեր հավատքի հայր Գրիգոր Լուսավորչի Աջի հետ, եւ պատգամեց միաբաններին, որ ամեն անգամ հավաքվելով Ս. Էջմիածնում՝ այս ուխտին եւ առաքելությանը անդրադարձ ունենան եւ կատարեն ուխտի նորոգությունը Ս. Էջմիածնի առաքելության:

Գարեգին Բ Հայրապետը հորդորեց այդ ճանապարհով առավել զորացնել միասնականության ոգին, եղբայրասիրությունը, որպեսզի կոչումին հավատարիմ կարողանան հանձնառության պատրաստակամություն դրսեւորել եւ, համբերելով բոլոր դժվարություններին ու փորձություններին, միասնականությամբ կերտել իրենց հաղթական ընթացքը եւ արդարացնել հավատավոր ժողովրդի սպասումները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Տերը զորացնի հոգեւոր հայրերին՝ հաստատուն մնալու իրենց հավատքի մեջ եւ նախանձախնդրությամբ արդյունավորելու իրենց առաքելությունը՝ ի փառս Աստծու, ի պայծառություն Հայոց Սուրբ Եկեղեցու եւ ի բարօրություն հայրենիքի ու աշխարհասփյուռ հայության:

Վեհափառ Հայրապետը պատասխանեց նաեւ միաբանների հարցերին, որոնք վերաբերում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելության տարբեր ոլորտներին, Եկեղեցի-պետություն հարաբերություններին եւ զանազան մարտահրավերներին:

Հայոց Հայկական օրացոյցն ու Հայոց Ամանորի տօնը (Նաւասարդ)

Սկիզբը՝ թիվ 11

Առաջին եւ ամենազարմանալի փաստը հ. Միքայէլ Չամչեանի «Հայոց պատմութեան» ժամանակագրութեան հատուածում է: Մ. Չամչեանը, իր կոթողային պատմութեան վերջում տալով ժամանակագրական աղիւսակներ, դրանց մէջ իրադարձութիւնների ժամանակները, ի թիւս այլ համակարգերի, տալիս է նաեւ, այսպէս կոչուած, «եօթանասնից» ժամանակագրական համակարգով: Եւ ահա, ըստ այս համակարգի, Բէլի սատակման տարին Չամչեանի պատմութեան մէջ դրուած է ն. Ք. 2343 թուականին: Սա ընդամէնը 2 տարով է տարբերւում մեր ստացած թուականից, որն այդքան մեծ վաղեմութեան դէպքերի պարագայում հարկ է համարել բացառիկ լաւ համընկնում: Այսինքն՝ Չամչեանի պատմութեան մէջ եւս Հայկի մեծագործութեան ժամանակը (Բէլի սպանումը), ուրեմն եւ՝ Հայկեան օրացոյցի հիմնումը դրուած է հէնց այն տարին (երկու տարուայ «սխալով» միայն), որ ստացուել է մեր հաշուարկով: Այստեղ էականն այն է, որ Մ. Չամչեանի տուած տարեթիւը ստացուած է մեր ստացածից բոլորովին տարբեր եղանակով: Եթէ մեր տարեթիւն ստացուել էր յատուկ հաշուարկի միջոցով (աստղագիտական իրողութիւնների հիման վրայ), ապա Չամչեանի տուած տարին ստացուել է տարբեր պատմագիրների տուած ժամանակային տուեալների համադրմամբ, տարբեր տիրակալների գահատարիներն իրար գումարելով: Սրանք որակապէս տարբեր եղանակներ են, եւ այս երկու եղանակներով միեւնոյն արդիւնքն ստանալը հիմք է տալիս վստահ լինելու, որ ստացուած տարեթիւն իրօք ճիշտ է:

Այս տարեթուի իսկութիւնը հաստատելու համար կարեւոր է նաեւ այն, որ մեզ աւանդուած պատմութիւնները Հայկի գործունէութեան, նրա եւ Բէլի հակամարտութեան եւ դրա ելքի մասին մեծապէս ներդաշնակ են այդ նոյն թուականներին վերաբերող պատմական իրադարձութիւնների հետ, որ տեղի են ունեցել Հայաստան–Միջագետք տարածաշրջանում: Սա համընկնում է Շումերի վաղդինաստիական շրջանի վերջերին:

Մի քանի կէտով նշենք այն զուգահեռութիւնները, որ առկայ են Հայկի եւ Բէլի մասին մեզ աւանդուած մատենագիր աղբիւրների եւ շումերական սեպագիր արձանագրութիւնների տուեալների միջեւ:

ա. Հայկեան օրացոյցը սկզբնաւորուել է ն. Ք. 2341 թ.: Յայտնի է, որ ն. Ք. 2341 թուականին (կամ դրան շատ մօտ) շումերական Ումմա փոքրիկ քաղաքի տիրակալ Լուգալ Զագէսիին կարողացել է իր իշխանութեանը ենթարկել Շումերի անկախ քաղաք-պետութիւնները, բոլորին միաւորել մէկ միասնական պետութեան մէջ:

բ. Բէլի մասին վկայուած է, որ նա իր իշխանութիւնը հաստատել է բոլորի վրայ ոչ օրինական, այլ ուժային միջոցներով: Նոյն կերպ սեպագիր աղբիւրները վկայում են, որ Լուգալ Զագէսին միահեծան իշխանութեան է հասել Շումերում ոչ օրինական ճանապարհով՝ բռնութեամբ եւ խաբէութեամբ:

գ. Բէլի մասին վկայուած է, որ հետապնդելով Հայկին՝ հասել է մինչեւ Հայոց ձոր գաւառը Վանայ լճի հարաւային ափին: Սեպագիր աղբիւրներն էլ վկայում են, որ Լուգալ Զագէսին արշաւել է դէպի հիւսիս եւ հասել Վանայ լճի (Վերին ծովի) շրջանին:

դ. Բէլին պարտութեան մատնող Հայկի մասին գիտենք, որ նա ունեցել է սակաւաթիւ զօրք: Լուգալ Զագէսիին պարտութեան մատնող Սարգոնի մասին էլ գիտենք, որ նա ունեցել է իր ժամանակի համար շատ փոքրաթիւ՝ ընդամենը 5400 հոգիանոց մշտական զօրք:

Շարունակությունը՝ էջ 8

ԼԵՌ ԿԱՄՍԱՐ. «Խորհրդային օրեր» անտիպ օրագրից

Սկիզբը՝ էջ 6

Պատռված որովայներ պիտի կարես, ճղճղված գանգեր իրար վրա փակցնես, շրթունքից կաշի մաշկես, արտեւանունքին կարկատես, ազդրերի կաշին հանես պիտի, մարմնի մի այլ մասի վրա գցես: Եթե այսօր մի շալվար կարկատել չկարողանաս, վաղն այս պատասխանատու բաներն ինչպե՞ս պիտի անես: Մի անշունչ շալվար է, կտրել-կարկատելու համար խեղճը ո՛չ եթեր է ուզում քեզանից անշնչանալու, ո՛չ օպիում, ո՛չ քլորոֆորմ: Եթե ուսումդ ավարտես, բժշկության անցնես ու մի օր էլ մի կին ավտոյի տակ ջախջախված իր ամուսնուն քովդ բերի վերքերը կարելու՝ խոմ չե՞ս կարող ասել՝ «սա այլեւս չի կարկատվի, մի նոր ամուսին առեք Ձեզ, տիկի՛ն»...

Երեքշաբթի 20.

– Օր չի պատահում, որ Երեւանում մի քսան մարդ չընկնի ավտոյի տակ ու մեռնի:

Այնքան շատ ավտո կա քաղաքում, եւ այնքան շտապ են երթեւեկում, որ չընկնել ավտոյի տակ եւ չմեռնել անկարելի է դարձել:

Բեռնակիր մեքենաները բե՞ռ են կրում, մարդատարները մա՞րդ են տանում: Ամենեւի՛ն:

Բեռնատարները բացառապես աղբ են կրում, իսկ մարդատարները՝ կոմունիստ:

Կոմունիստները մինչեւ կոկորդը կերածխման, աղջիկների կարիք են զգում: Աղջիկներն էլ, Աստված կտրի նրանց բնավորությունը՝ մի անգամից խոսք տալու սովորություն չունեն, կոտրատվում են, ծեքծեքվում, մի քառասուն անգամ մարդուն բերել-տանելուց հետո, նոր համաձայնվում են վերջապես:

Այս հաշվով յուրաքանչյուր կոմունիստ մի աղջկա համար քառասուն անգամ պիտի իր ավտոյով գնա-գա, ամենապակասը մի տասը մարդ գետին տապալելով:

Ահա տեսեք, թե այսպիսի ինդուստրիալ դարում, սերը ինչ կոտորածներ կարող է առաջացնել: Նախկին իշու եւ ձիու դարերում երբեք չէր տեսնված, որ սերն այդչափ զոհ տաներ մարդկությունից:

Քրիստոսը հարյուր անգամ իր ավանակը հեծած, այցելեց Մագդայի քույր Մարիամին, բայց ամենեւին մարդ ոտնատակ չտվեց…

Իմ կարծիքով, եթե մի երկիր հիմար է՝ պետք է ավանակով ման գա: Կամ ավելի լավ կլինի, եթե ուղղակի ոտքով գնա-գա: Որովհետեւ վա՛յ այն երկրին, ուր հիմարությունը ձի հեծած է արշավում, իսկ իմաստությունը հետիոտն է քայլում…

Մենակ ժամանակս, սովորաբար, դուռս կողպում, ներս եմ մտնում, եւ բախելիս մինչեւ ծանոթ զարկեր չլինեն, բաց չեմ անում՝ վախենում եմ չեկիստներից, միլիցիայից եւ հարկահավաքներից:

Այսօր ծանոթ զարկ լսելով, կարծեցի աղջիկս էր, բաց արի՝ հարկահավաքն էր, որն ինձ մեկնեց 300 ռուբլու հարկաթերթ:

Երեկոյան, երբ դեպքը պատմեցի աղջկաս, վերջինս կշտամբեց անզգույշ արարքս, եւ պայմանավորվեցինք, որ այսուհետ մինչեւ դրսից չպոռա՝ «Պապա՛, արի դուռը բաց արա»՝ ես չբանամ:

– Իսկ եթե հարկահավաքը կամ չեկիստը գա, քո ձայնը կեղծելով առաջարկի բա՞ց անել դուռը,– ասում եմ ես,– հիշո՞ւմ ես «Ձանգլո-Պանգլո ուլիկների» պատմությունը, երբ գայլը այծի ձայնով ասում է, որ բաց անեն դուռը, որ մտնի նրանց ուտի:

– Այդ ճիշտ է,– ասում է աղջիկս մտահոգ, մանավանդ, որ ձայնը կեղծելու մեջ չեկիստը գայլից ավելի ճարպիկ է:

– Երկու դուռ ունենալու է, աղջիկս,– ասացի,– մեկը հայտնի՝ բոլորովին չբանալու համար, մյուսը ծածուկ՝ մեր ելումուտի համար: Այո՛, երկու դուռ, ճիշտ այնպես, ինչպես այսօր յուրաքանչյուր սովետական քաղաքացի երկու երես ունի՝ մեկը լալու, մյուսը ծիծաղելու համար, ինչպես երկու լեզու ունի, մեկը՝ գովելու, մյուսը՝ հայհոյելու, ինչպես երկու ականջ ունի, մեկը՝ սոցիալիզմի քարոզը լսելու, մյուսով՝ դուրս հանելու:

Չորեքշաբթի 21.

– Այսօր Ստալինի 70-ամյակի տոնակատարությունն է քաղաքում: Բոլոր հորիզոնական վայրերում Ստալինի արձաններն են տնկված, բոլոր ուղղահայաց պատերից Ստալինի նկարները կախված: Գույնզգույն լապտերներով «Ստալին» է գրված: Թխված հացի, բուլկու եւ տորթի վրա՝ Ստալին, խանութի ցուցափեղկերում խնձորով «Ստալին» է գրված, տանձով՝ «Ստալին», փշատով՝ «Ստալին», չամիչով՝ «Ստալին»:

Ու մտածում ես ակամա: Այսօր ինչ որ ուտես՝ «Ստալին» է: Իսկ կարո՞ղ է այսքան «Ստալին» ուտող մեկն արտաթորի այնպես, որ «Ստալին» չլինի…

Ես ասել եմ մի անգամ, հիմա էլ կրկնում եմ: Ռուսաստանում ինչ ռեժիմ էլ տիրապետի ապագայում, բոլշեւիզմը դեռ վաթսուն տարի կշարունակի գոյություն ունենալ իներցիայով:

Եթե ապագա պատերազմում Ամերիկան <ազատագրի> մեզ, եւ Տրումենը նախագահ նստի Ռուսաստանին, մեր ժողովուրդը <դեռ> երկար պիտի Տրումենին նայի ու «կեցցե՛ Ստալին» պոռա: Ինչ գիրք էլ դնես մեր ժողովրդի առջեւ՝ նա պիտի նայի ու «Ստալինի կենսագրությունը» կարդա, ինչ գործողություն էլ անի, «Ստալինյան հնգամյակի պլանը» պիտի կատարի, ուրիշ ճար չկա:

Եվ այդ բնական է: Առօրյա կյանքում էլ է պատահում: Երեսուն տարի Կատարինե անուն կնոջ հետ ապրող ամուսինը երկրորդ անգամ ամուսնանալով, ինչ անունով կին էլ, որ առած լինի՝ մի տասը տարի «Կատարինե» կկանչի նրան:

Մեր քաղաքում Ուստա Ակոբ անուն մի դերձակ կար, որ 58 տարի միեւնույն խանութում նստած շալվար էր կարում հանուր քաղաքացոց: Երբ այդ մարդը վերջապես մեռավ, նրան հաջորդող, նույն խանութում նստած բոլոր դերձակներին «Ուստա Ակոբ» անունն էին տալիս:

Հիմա Ռուսաստանի Ուստա Ակոբն էլ Ստալինն է: Նրա աթոռին ինչ անունով մարդ էլ նստի՝ «Ստալին» պիտի կոչվի:

Հինգշաբթի 22.

– Այսօր վերջացավ Ստալինի 70-ամյա հոբելյանը, եւ 7 օրից հետո Նոր տարվա տոներն են գալիս: Եթե երեկվա տոնախմբությունը ժողովուրդն անկեղծ սրտով կատարելիս լիներ եւ իրոք ինքնիրեն կոտորեր, ինչպես ցույց էր տալիս, նա այնքան հոգնած պիտի լիներ, որ այս անգամվա Նոր տարին եկող տարի պիտի դիմավորեր, բայց որովհետեւ ժողովրդի արածը լոկ դերասանություն էր, այդ պատճառով այսօր էլ եթե Նոր տարին ժամաներ՝ պատրաստ էր տոնել այն:

Սովետական ժողովուրդը դերասան է լոկ, որ բեմը բարձրացած «սոցիալիզմ» է խաղում Ստալինի համար եւ դերասանական շորերը, կեղծամն ու մորուքը միայն այն ժամանակ կհանի վրայից եւ իր բնական կյանքով կապրի, երբ վերջ գտնի այս իշխանությունը:

Սրանից 25 տարի առաջ Սովետական Հայաստանում գոյություն ուներ «Կարմիր մոծակ» անուն միակ երգիծական թերթը: Հետագայում, երբ սկսեցին ճահիճները չորացնել՝ Հայաստանի բոլոր մոծակների <հետ> «Կարմիր մոծակն» էլ սատկեց, որի հետեւանքով, ճիշտ է, մալարիան վերջացավ մ<եր երկրում>, բայց դրա հետ էլ ծիծաղը վերացավ…

Ուրբաթ 23.

– Այսօր ես Թաղման բյուրոն անցա, իմանալու, թե մոտավորապես ի՞նչ ծախս է լինում միջակ մեռնողի վրա, եթե իր միջոցով թաղվելու լինի:

Դուրս է գալիս, որ առնվազն՝ հինգ հազար ռուբլի:

– Այդ ո՞ր հիմարն է, որ հինգ հազար կուտա մեռնելու համար, երբ այն կողմ, դրա կես գնով բժիշկներն առողջացնում են հիվանդին,– զարմացած ասացի ես:

– Մի՛ զարմացեք, ընկե՛ր,– պատասխանեց բյուրոյի վարիչը,– ոչ թե հինգ, այլ անգամ տասը հազար տվողներ կան մեռնողների մեջ՝ միայն այս կյանքից ազատվեն:

– Թաղման բյուրոն ի՞նչ գարանտիա է տալիս մեռնողին, որ նորից չի ապրելու:

– Բյուրոն մեռնողին ապահովագրում է կյանքի դեմ մինչեւ հավիտյան:

– Ընկե՛ր վարիչ,– ասացի,– իսկ չի <կարելի> հազար ռուբլին մեռնելիս կանխավճար տալ, իսկ մնացյալը «հավիտյանից» հետո, երբ <ապրելու> բոլոր կասկածները վերացած կլինեն հանգուցյալի մեջ…

Այս պայմանը վարիչը չընդունեց, ինչը որ կասկածն ավելի ուժեղացրեց մեջս: Այս տեսակ խաբեբաներ շատ եմ տեսել: Մի ժամանակ սուտ վալադներ էին դուրս ընկել, որոնք խոսք էին տալիս մարդկանց Իրան անցկացնել, տանում էին Արաքսի ափի սահմանագլուխը, փողն առնում, իրեն էլ մատնում չեկիստների ձեռքը:

Չէ՛, եղբայր, նման պայմանով ես չեմ մեռնի:

Համառ կերպով խոսվում է, որ հունվարից հետո կյանքը էժանանալու է: Իսկ մա՞հը, մա՞հը երբ պիտի մի փոքր մատչելի դառնա:

Ա՜խ, եթե գտնվեր մի բարերար հարուստ, որ իմ մահվան ծախսերն իր վրա վերցներ:

Ձրի աշխարհ եկա, հիմա փող չունեմ, որ հեռանամ…

Տպագրության պատրաստեց գրականագետ Վանուհի Թովմասյանը

Հայոց Հայկական օրացոյցն ու Հայոց Ամանորի տօնը (Նաւասարդ)

Սկիզբը՝ էջ 7

ե. Բէլի մասին պատմիչները վկայում են, որ նա Հայկի դէմ արշաւել է յոյժ մեծաթիւ զօրքով: Լուգալ Զագէսիի մասին էլ յայտնի է, որ ճակատամարտին նրա կողմից մասնակցել են իրեն ենթակայ 50 էնսիներ եւ լուգալներ (թագաւորներ): Եթէ այս ենթակայ իշխանաւորներից ամէն մէկի զօրքը հաշուենք առնուազն 1000 զինուոր, ապա կստացուի, որ Լուգալ Զագէսին պիտի ունենար գոնէ 60 000-անոց բանակ, որն առնուազն 10 անգամ մեծ է իր ախոյեանի զօրքի թուից:

զ. Մեր հեղինակները Հայկի սպառազինութիւնից նշում են միայն լայնալիճ աղեղը եւ կապարճը: Այսինքն՝ Հայկի զօրքը եղել է թեթեւազէն նետաձիգ: Սեպագրերից էլ յայտնի է, որ Սարգոնն առաջինն է եղել, որ կիրառել է նետաձիգ զօրք: Նրա զօրքը բաղկացած է եղել թեթեւազէն նետաձիգներից:

է. Բէլի սպառազինութիւնը, ըստ մատենագիր աղբիւրների, ծանր է եւ ամբողջական: Նա կրում է երկաթէ սաղաւարտ, պղնձէ զրահներ՝ կրծքին եւ մարմնի այլ մասերին, ունի ծանր վահան, կողքին՝ երկսայրի սուր, եւ ձեռքին՝ երկար նիզակ: Սա այդ ժամանակուայ ծանրազէն հետեւակայինի զէնք-զրահի ամբողջական նկարագրութիւնն է: Հէնց այդպիսին էլ եղել է Լուգալ Զագէսիի բանակը:

ը. Ճակատամարտից առաջ Հայկը «հայհոյելով» Բէլին՝ նրան անուանում է «շուն» եւ նրա հետիններին էլ՝ «երամակ շանց»: Ահա սրան զուգահեռ էլ սեպագիր աղբիւրներից գիտենք, որ վճռական ճակատամարտում պարտուած Լուգալ Զագէսիին յաղթող Սարգոնը դրել է շների վանդակի մէջ:

Այս նշուած եւ որոշ այլ մանրամասներով զարմանալի զուգահեռութիւն ենք տեսնում Հայկի եւ Բէլի մասին հայկական մատենագիր աղբիւրներով մեզ հասած պատմութեան եւ Շումերի այս տիրակալի քաղաքական ու ռազմական գործունէութեան մասին սեպագիր աղբիւրներով մեզ աւանդուած տուեալների միջեւ: Այսինքն՝ ստացւում է, որ Հայկեան օրացոյցի հիմնադրման, սկզբնաւորման համար մեր ստացած տարեթիւը լիովին ներդաշնակ է տարածաշրջանի քաղաքական պատմութեան մասին մեր արդի իմացութեանը:

Իբրեւ Նաւասարդեան տօնի մեր ստացած դիրքի յաւելեալ հիմնաւորում՝ կարելի է դիտել նաեւ բազմաթիւ ժողովրդական սովորութիւնները, որ Տարեմուտի, Ամանորի հետ կապուած պահպանուել են հայ ազգագրութեան մէջ: Նաւասարդի բազմաթիւ ժողովրդական ծէսեր ու սովորութիւններ իրենց բնոյթով այնպիսին են, որ Հայաստանի եղանակային պայմաններում դրանք հնարաւոր է կատարել միմիայն ամառնամուտի շրջանում: Բազմաթիւ օրինակներից կարելի է նշել Նաւասարդին նորահաս ցորենի բերքի ընծայումը տաճարին, թթի ծառ թափ տալը, ծաղիկներով արուող գուշակութիւնները եւ այլն: Յիշենք, որ Հայաստանի պայմաններում աշնանացան ցորենը հասունանում է հէնց ամառնամուտի շրջանում, իսկ թթի հասունացման ժամանակը ամառնամուտին մօտ լինելը այսօր էլ է յայտնի բոլորին: Գալով ծաղիկներին էլ՝ նկատենք, որ թէպէտ այսօր շատ տարածուած է ծաղկունքի շրջան համարել գարունը, սակայն իրականում Հայաստանի բնութեան մէջ ամենածաղկուն շրջանը հէնց ամառնամուտի (եւ դրան մէկ-երկու շաբաթ նախորդող) շրջանն է: Իսկ գարնանամուտին ծաղկունքը կարող է սկսուել միայն, եւ բնութեան մէջ ծաղիկներն այդ ժամանակ յոյժ սակաւ են: Օրինակ՝ Բիւրականում ձնծաղիկները սկսում են յայտնուել գարնանամուտից մէկ-երկու շաբաթ առաջ, իսկ բուն գարնանամուտի օրերին սկսում են ծաղկել մանուշակները:

Այստեղ նշուածները եւ բազում այլ ազգագրական տուեալներ, որպէս Նաւասարդեան տօնի կայուն դիրք, միանշանակ ցոյց են տալիս ամառնամուտի շրջանը, ի մասնաւորի՝ ամառնամուտին նախորդող եւ յաջորդող մէկ-երկու շաբաթները:

Եթէ ինչ-որ տեղ դեռ հնարաւոր է ազգագրական տուեալներին թերահաւատօրէն վերաբերուել՝ համարելով դրանք աղաւաղուած եւ ըստ այդմ՝ ոչ արժանահաւատ, ապա նոյն վերաբերմունքը բնաւ չի կարելի դրսեւորել հնագիտական նիւթի վերաբերմամբ: Եւ այստեղ էլ մենք ունենք մեր գտած ամսաթուի (ուստի նաեւ՝ դրա միջոցով ստացուած տարեթուի) հիմնաւորումը: Մեզ են հասել բազմաթիւ հնագիտական առարկաներ, որոնք այս կամ այն կերպ պարունակում են օրացուցային տեղեկոյթ: Այդպիսի իրերից յատկապէս ուշագրաւ է Շիրակում Քեթիի դամբարանադաշտից գտնուած, ն. Ք. 32–30-րդ դարերին վերաբերող քրեղանը: Սեւ փայլեցուած խեցիից այս քրեղանի զարդապատկերների մանրակրկիտ վերլուծութիւնը (որ հրատարակուած է մասնագիտական գրականութեան մէջ) հնարաւորութիւն է տուել վերականգնել դրա ստեղծման ժամանակի օրացուցային պատկերացումները: Ստացուել է շատ ուշագրաւ մի օրացոյց, որ սկզբունքօրէն համընկնում է այլ տուեալների հիման վրայ վերականգնուած Նախահայկեան օրացոյցին (ցաւօք, լրագրային յօդուածի սեղմ հնարաւորութիւնները թոյլ չեն տալիս այստեղ անդրադառնալ այս յոյժ կարեւոր օրացոյցին): Մեզ համար այստեղ կարեւորն այն է, որ տարեշրջանի սկիզբն այս օրացոյցում եղել է դարձեալ ամառային արեւադարձի (ամառնամուտի) շրջանը (ամառնամուտից հէնց 8 օր առաջ): Այսինքն՝ ունենք Նաւասարդեան տօնի ժամանակի համար մեր ստացած դիրքի հիմնաւորում նաեւ հնագիտական գտածոյի միջոցով: Առաջ անցնելով՝ նշենք, որ Հայոց հնագոյն գլխաւոր տօնի այսպիսի դիրքն է ցուցանում նաեւ հայկական հրաշապատում հէքեաթների եւ «Սասնայ ծռեր» դիցավէպի օրացուցային–աստղագիտական–տիեզերաբանական վերլուծութիւնը (այդ վերլուծութիւնները հրատարակուած են մասնագիտական գրականութեան մէջ):

Այսպիսով՝ ստանում ենք հետեւեալը: Հիմնուելով վաղ միջնադարից մեզ հասած հայկական օրացոյցի եւ դրան առնչուող այլ տուեալների վերլուծութեան վրայ, կատարելով օրացուցային եւ աստղագիտական հաշուարկ՝ ստացել ենք, որ Հայոց հնագոյն գլխաւոր տօնը՝ Նաւասարդը, տօնուել է Հայկի աստղի առաջին ծագման դիտումով, որ տեղի է ունեցել ամառնամուտից 8 օր առաջ՝ մեր արդի օրացոյցով յունիսի 14-ին: Դրա միջոցով որոշւում է նաեւ Հայկեան օրացոյցի սկիզբը, որ լինում է ն. Ք. 2341 թ.: Այս արդիւնքը հաստատւում է պատմագիտական, ազգագրական, բանահիւսական եւ հնագիտական անկախ տուեալներով: Սա թոյլ է տալիս իրաւունք վերապահել մեզ՝ այս ժամանակից սկսելու հայոց Հայկեան օրացոյցի տարեհաշիւը:

Հայոց Նաւասարդեան տօնի նախնական դիրքը ստոյգ իմանալը շատ կարեւոր է մի քանի առումներով:

Նախ, ինչպէս գիտենք, երկար դարեր (հազարամեակներ) Նաւասարդը եղել է մեր մեծագոյն ազգային-պետական տօնը: Նաւասարդեան տօնի կարեւորութիւնն այնքան մեծ է եղել, որ այդ բազմօրեայ տօնին մասնակցել է ամբողջ արքունիքը՝ թագաւորի գլխաւորութեամբ, Հայոց բանակը, աւագանին եւ ժողովրդի աշխարհախումբ բազմութիւն:

Բացի այդ, գիտենք նաեւ, որ հէնց Նաւասարդեան տօնին է տեղի ունեցել Հայոց Դարձը, որ է՝ Հայոց ամբողջ արքունիքի, բանակի եւ ժողովրդի մկրտութիւնը Արածանու ջրերում: Այսինքն՝ Նաւասարդեան տօնը, լինելով մեր ազգային-պետական հնագոյն տօնը, միեւնոյն ժամանակ նաեւ Հայոց Դարձի տօնն է: Եթէ այսօր որեւէ մէկը կամենայ գտնել-վերականգնել Հայոց Դարձի բուն ժամանակը եւ նշել, ինչ-որ կերպ տօնել այդ դարակազմիկ իրադարձութիւնը, ապա դրա համար ընդունելի ժամանակը Նաւասարդեան հնագոյն տօնի օրն է, այն է՝ մեր արդի օրացոյցով յունիսի 14-ը:

Թէպէտ, ինչպէս գիտենք, Հայոց տօնացոյցի մէջ աւանդաբար չի եղել Հայոց Դարձի տօն, այդուհանդերձ այս կապակցութեամբ նկատենք, որ Հայաստանեայց Եկեղեցու տօնացոյցում Հայոց Դարձի տօն ունենալը կարեւոր է տարբեր առումներով: Անկասկած է, որ հայ քրիստոնէութեան պատմութեան ամենադարակազմիկ իրադարձութիւնը պետականօրէն քրիստոնէութեան ընդունումն է Մեծ Հայքի թագաւորութիւնում, այսինքն՝ Հայոց Դարձը: Ըստ այսմ՝ պատշաճ է, որ այդ ամենադարակազմիկ իրադարձութիւնը յատուկ տօնուի: Պակաս կարեւոր չէ եւ այն, որ հայոց հնագոյն Նաւասարդեան տօնի օրը նաեւ Հայոց Դարձի տօն կատարելը իրար կշաղկապի հայոց հնագոյն անցեալի եւ վերջին՝ աւելի քան 1700-ամեայ ներկայի հոգեւոր-մշակութային-ազգային իրողութիւնները: Իսկ այս կարգի շաղկապումը բնաւ երկրորդական չէ՝ նկատի առնելով այսօր տարբեր կրօնական-դաւանական քամիներով պառակտուած մեր հասարակութեան վիճակը:

Ինչպէս վերը նշուեց, Հայկեան օրացոյցը հայոց օրացոյցների մէջ ամենահինը չէ: Դրանից առաջ Հայաստանում շատ երկար ժամանակ կիրառուել է պայմանական անունով «Նախահայկեան» կոչուած օրացոյցը: Այսօր յայտնի են այս հնագոյն օրացոյցի թէ՛ սկիզբը, թէ՛ պաշտօնական կիրառութեան աւարտը եւ թէ՛ ներքին իւրայատուկ կառուցուածքը բաւարար մանրամասնութեամբ: Սակայն դրա նկարագրութիւնը դուրս է այս յօդուածի խնդիրներից (դա առանձին հրապարակման նիւթ է): Իսկ ինչ վերաբերում է Հայկեան օրացոյցին, նշենք, որ այսօր այս օրացոյցի սկզբից (այսինքն՝ Հայկ նահապետից) ակունք առնող տարեհաշիւը բաւական ժողովրդականութիւն է վայելում հայ հասարակութեան մէջ, եւ տարբեր հրատարակութիւններ յաճախ նշում են այդ սկզբնակէտից սկիզբ առնող թուականը, տպւում են տարբեր օրացոյցներ՝ այդ նոյն թուականի նշումով: Ընդ որում՝ հանդիպում են իրար հակասող եւ սխալ թուականներ (շատ տարածուած է յատկապէս Ղ. Ալիշանի առաջարկած սկզբնատարուց հաշուած թուականը): Ըստ այսմ՝ աւելորդ չէ որոշ պարզաբանում տալ Հայկեան թուականի կիրառութեան վերաբերեալ:

Այս օրացոյցի տարեհաշիւը կիրառելիս հարկ է նկատի ունենալ, որ այս օրացոյցի տարիները մօտ մէկ քառորդ օրով կարճ են այսօր մեր կիրառած օրացոյցի տարիներից: Եւ երկար ժամանակների մէջ դա յանգեցնում է Հայկեան տարեթուի աւելացման մէկ-երկու տարով: Դիւրութեան համար այստեղ տանք վերջին մի քանի տարիների աղիւսակը՝ Հայկեան եւ Փրկչական (ներկայիս կիրառուող) թուականների զուգադրութեան: Եւ յիշեցնենք, որ Հայկեան թուականների տարիները կարող են սկսուել տարբեր ամսաթուերի (ըստ մեր ներկայիս օրացոյցի): Սակայն Նաւասարդեան տօնը միշտ նշուել է եւ նշւում է անկախ Նաւասարդ ամսի մէկից, եւ այն միշտ լինում է ամառային արեւադարձից 8 օր առաջ՝ (մեր արդի օրացոյցով) յունիսի 14-ին: Աղիւսակը կազմուած է Նոր (Գրիգորեան) տոմարի համար:

Հայկեան թուականի տարեսկիզբը Փրկչական (Գրիգորեան)

4350 թ. Նաւասարդի 1	2007 թ. Յուլիսի 26
4351 թ. Նաւասարդի 1	2008 թ. Յուլիսի 25
4352 թ. Նաւասարդի 1	2009 թ. Յուլիսի 25
4353 թ. Նաւասարդի 1	2010 թ. Յուլիսի 25
4354 թ. Նաւասարդի 1	2011 թ. Յուլիսի 25
4355 թ. Նաւասարդի 1	2012 թ. Յուլիսի 24
4356 թ. Նաւասարդի 1	2013 թ. Յուլիսի 24
4357 թ. Նաւասարդի 1	2014 թ. Յուլիսի 24
4358 թ. Նաւասարդի 1	2015 թ. Յուլիսի 24
4359 թ. Նաւասարդի 1	2016 թ. Յուլիսի 23
4360 թ. Նաւասարդի 1	2017 թ. Յուլիսի 23
4361 թ. Նաւասարդի 1	2018 թ. Յուլիսի 23
4362 թ. Նաւասարդի 1	2019 թ. Յուլիսի 23
4363 թ. Նաւասարդի 1	2020 թ. Յուլիսի 22
4364 թ. Նաւասարդի 1	2021 թ. Յուլիսի 22
4365 թ. Նաւասարդի 1	2022 թ. Յուլիսի 22
4366 թ. Նաւասարդի 1	2023 թ. Յուլիսի 22
4367 թ. Նաւասարդի 1	2024 թ. Յուլիսի 21
4368 թ. Նաւասարդի 1	2025 թ. Յուլիսի 21
4369 թ. Նաւասարդի 1	2026 թ. Յուլիսի 21
4370 թ. Նաւասարդի 1	2027 թ. Յուլիսի 21
4371 թ. Նաւասարդի 1	2028 թ. Յուլիսի 20
4372 թ. Նաւասարդի 1	2029 թ. Յուլիսի 20

Գրիգոր ԲՐՈՒՏԵԱՆ
Ֆիզիկամաթեմատիկական գիտ. թեկնածու

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 28.06.2019 թ.
Տպաքանակը՝ 1175

Նոր տնօրինություն

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Տաթեւ եպս Հակոբյանը համատեղության կարգով նշանակվել է Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ, Վազգեն եպս Միրզախանյանն ազատվել է Վիրահայոց թեմի առաջնորդի պաշտոնից եւ կվերադառնա Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Տնօրինության համար հիմք է ծառայել Վազգեն սրբազանի դիմումը:

Մեկ այլ տնօրինությամբ Կիրակոս վրդ. Դավթյանը, ազատվելով Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահի պաշտոնից, նշանակվել է Վիրահայոց թեմում՝ որպես առաջնորդական տեղապահ: